

ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ  
ՏԻՊԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայ-իտալական յուշարձանների (նաեւ ճարտարապետական փոքր ձեւերի) տիպարական եւ դեղարուեստական առանձնայատկութիւնների ուսումնասիրութիւնը պայմանաւորուած է երկու երկրներում գտնուող յուշարձաններով, որոնք երկու ժողովուրդների պատմութեան համար որոշակի նշանակութիւն ունեցող եւ կարեւոր փաստերը եւ յուշը արձանագրելուն զուգահեռ խօսում են հայ-իտալական դարաւոր բարեկամութեան մասին:

Երկու երկրներում գտնուող յուշարձանների տիպարանութիւնը բազմազան է, օրինակ՝ Վենետիկի Տորչելլոյ կղզու մայր տաճարի պատին փակցուած յուշատախտակը, Վենետիկի Սբ. Մարկոսի տաճարի ներսում հայկական խորանը, Վենետիկի Սբ. Մարկոսի տաճարի ճակատի չորս ձիերը (քնօրինակները այժմ եկեղեցու թանգարանում են), Վենետիկի Սբ. Փրկիչ եկեղեցում գտնուող Կատերինա Կոռնարոյի դամբարանը եւ տապանը, Սբ. Մարտին եկեղեցու քահանայատան պատին՝ Մխիթարեան հայրերի Վենետիկում բնակութեան յուշաքարը եւ այլն:

Սրանք միայն Վենետիկում, իսկ ողջ Իտալիայի տարածքում դրանք հիմնականում հանդիպում են յուշաքարերի, յուշատախտակների, խաչքարերի, որմնագրերի, տապանաքարերի, աղբիւր-յուշարձանների, արձանների, մատուռ-եկեղեցիների եւ այլ յօրինուածքների տեսքով:

Օրինակ՝ Միլանում եկեղեցի եւ խաչքար, Նապոլիում՝ Սան Գրեգորիո Արմէնո փողոցը եւ եկեղեցին (Գրիգոր Լուսաւորչի մատուռով), Ռաւեննայի Մայր եկեղեցու մօտ հայ զինուորականի գերեզմանը, Զ.-է. դարի Տորչելլոյի եկեղեցու յուշաքարը

(հայ կառուցողի մասին), հայկական նրբանցք եւ թաղամաս վեներտիվում, Նարդոյի պահպան Սբ. Գրիգոր Լուսաւորիչին նուիրուած եկեղեցին (ի դէպ 2013 թուականից Իտալիայի Նարդոյ քաղաքը եւ Հայաստանի Գիւմրի քաղաքը դարձել են քոյր քաղաքներ), հայ-իտալական բարեկամութեանը նուիրուած խաչքար-յուշարձանը Բարիում (ճարտ. Աշ. Գրիգորեան), Իտալիայի Պեզարոյ քաղաքում տեղադրուած Հայոց ցեղասպանութեան նահատակների յիշատակին նուիրուած խաչքար (ճարտ. Ա. Մխիթարեան), (Յկար 1) եւ այլն:



Նկար 1. Իտալիայի Պեզարոյ քաղաքում տեղադրուած Հայոց ցեղասպանութեան Սուրբ Աստուածածնի յիշատակին նուիրուած խաչքար (ճարտ. Ա. Մխիթարեան)

Հայ-իտալական բարեկամութեանը նուիրուած խաչքար-յուշարձանը Բարիում բացուել է 2013ի Յունուարի 11ին՝ Բարիի պատմական կենտրոնում, նաւահանգստի դիմաց: Յուշասիւն-խաչքարը մեծ հանդիսութեամբ օժուել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբաններ, Իտալիայի Հայոց Հովուութեան հոգեւոր հովիւներ թովմայ արեղայ Խաչատրեանի (Միլան) եւ Գառնիկ արեղայ Մխիթարեանի (Հռոմ) կողմից:





Նկար 2. Հայ-իտալական բարեկամության նուիրուած խաչքար-յուշատեան (նկար 2) ստեղծման պատմութիւնը մեզ տանում է 1998 թուական: Ամէն ինչ սկսուեց նրանից, որ Իտալիայում Հայաստանի առաջին ղեկավար Գագրիկ Բաղդասարեանը ճարտարա-

Հայ-իտալական բարեկամութեանը նուիրուած խաչքար-յուշատեան (նկար 2) ստեղծման պատմութիւնը մեզ տանում է 1998 թուական: Ամէն ինչ սկսուեց նրանից, որ Իտալիայում Հայաստանի առաջին ղեկավար Գագրիկ Բաղդասարեանը ճարտարա-

պետութեան ազգային թանգարան-ինստիտուտի մասնակցութեամբ հարաւային Իտալիայի Տրանի քաղաքում կազմակերպեց հայ ճարտարապետութեան, շինարուեստին եւ շինանիւթին նուիրուած ցուցահանդէս: Դեսպանը ցուցահանդէսի յանձնակատար ճարտարապետ Աշոտ Գրիգորեանի հետ այցելեց Ապուլիայի շրջանում գտնուող մի շարք հայկական յուշարձաններ եւ ի մասնաւորի իր մտահոգութիւնը յայտնեց Բարի քաղաքի հայկական Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մասին, որի վրայ ոչ մի արձանագրութիւն չկար այն մասին, որ դա հայկական է: Տեղում որոշում ընդունուեց նախագծել եւ Իտալիայի համապատասխան մարմիններին ներկայացնել մի յուշաքարի հաքիզային նախագիծ՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու պատին յուշաքար տեղադրելու թուլտուութիւն ստանալու համար:



Նկար 3. Հայ-իտալական քարեկանութեան նուիրուած խաչքար-յուշարձանը Բարիում:

Աշոտ Գրիգորեանի կողմից արուեց ակնկալուող յուշաքարի մի քանի հաքիզային նախագիծ-առաջարկ: Յետագայում պար-



գուեց, որ աւելի նպատակայարմար է եկեղեցու հարեւանութեամբ յուշասիւն տեղադրել: 2000 թուականին յուշասեան նախագիծը վերանայուեց եւ վերանախագծուեց որպէս խաչքարաղբիւր յուշասիւն: 2000ին հաստատուեց խաչքար-յուշասեան նախագիծը եւ հեղինակը՝ Գրիգորեանը, հրաւիրուեց Խտալիա ապագայ յուշասեան քարի ընտրութիւնը կատարելու, քանի որ Խտալական կողմը գտնում էր, որ խաչքար-յուշասիւնը պէտք է լինի տեղական քարից: Տեղում պարզուեց, որ խաչքար-յուշասեան իրականացումն էլ պէտք է յանձն առնի հեղինակը: Շուրջ երկու ամիս աշխատելուց յետոյ Գրիգորեանին յաջողուեց 2001 թուականի աշնանը աւարտել խաչքար-յուշասեան կերտման աշխատանքները: Այն իրենից ներկայացնում է 2մ եւ 40սմ բարձրութեամբ, 40x80 չափերի մի խորանարդ ծաւալ, որ հայկական եւ լատինական խաչերի եւ զարդանախշերի յորինուածքներով համադրուած լուծում ունի: Յուշասեան երեսմասում յաւերժութեան նշանի եւ մեծադիր հայկական խաչքարին յատուկ խաչապատկերի յորինուածքը աւարտում է վերնամասում երկինքը խորհրդանշող աջ եւ ձախ տեղադրուած թռչնապատկերով, որոնց կենտրոնում առ երկինք խոյացող կենաց ծառի յորինուածքն է (նկար 3):

Յուշասեան երեսմասի ձախ հատուածում հայատառ, իսկ աջ մասում՝ լատինատառ սեպագիր արձանագրութիւն է հետեւեալ բովանդակութեամբ՝ «Նդաւ խաչքարս ի նշան հազարամեկի բարեկամութեան ժողովրդեան հայոց եւ իտալացոց երկրին հայոց եւ ապուլեցոց» (նկար 4):

Յուշարձանի աջ, ձախ եւ յետնամասի հարթութիւնները խաչապատկեր համադրութիւններով լուծումներ ունեն: Հեղինակի եւ յուշասեան ճակատագրով մտահոգուած անձանցից անկախ յուշասեան տեղադրումը տարիներ շարունակ յետաձգուած էր: Վերջապէս 2012 թուականին Խտալիայի Ապուլիա շրջանի եւ Բարիի հայ համայնքի ղեկավար, գործարար Ռուբէն Թիմուրեանի ջանքերով եւ Բարիի քաղաքապետի անմիջական մասնակցութեամբ ընտրուեց յուշասեան տեղադրման տարածքը: Արուեց տարածքի բարեկարգման եւ յուշասեան տեղադրման նախագիծ եւ տեղադրուեց խաչքար-յուշասիւնը: Այս խաչքար-յուշասիւնը մեր օրերում հարաւային Խտալիայում տեղադրուած միակ հայկական խաչքարն է, ուր առ այսօր հաւաքուած են, յուշ-երեկոներ, յիշատակի օրեր եւ այլ զանազան միջոցառումներ են անցկացնում Բարիի հայերը (նկար 5):




Նկար 4. Հայ-իտալական բարեկամությանը նուիրուած  
խաչքար-յուշարձանը Բարիում

*Հայաստանում էլ հանդիպում ենք մի շարք իտալական  
յուշարձանների: Օրինակ՝ երկու երկրների բարեկամութեան ազ-  
րիւր-յուշարձանը Նրեւանի օղակաձեւ այգում (ճարտարապետ՝*



Ռ. Խորայէլեան) եւ նոյն յուշարձանի բնօրինակը Իտալիայի Կարարա քաղաքում (նկար 6), «Բարեկամութեան ձեռքեր»ը Երեւանի օղակաձեւ այգում (հեղ. Զիլմա Մադերա, վերամշակումը Երեւանում Արա Յարութիւնեանի), (նկար 7), Լէոնարդոյ դա Վինչիի զիմաքանդակը Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան ազգային համալսարանի բակում, իտալական փողոցը Երեւանում, «Պիացցա Գրանդէ» բիզնես-համալիրը Երեւանում եւ այլն:



Նկար 5. Հայ-իտալական քարեկամութեանը նուիրուած խաչար-յուշարձանը Բարիում

Երեւանի օղակաձեւ զբօսայգում, «Երիտասարդական» մեարոյի վերգեանեայ կայարանի հարեւանութեամբ, աչք են շոյում «Բարեկամութեան» սպիտակ ձեռքերը: Զեռքեր, որոնք, որպէս պուրակային կոթողներ, վաղուց արդէն դարձել են քաղաքի առաւել սիրուած եւ ճանաչելի յօրինուածքներէր: Սակայն ինչո՞ւ «Բարեկամութեան» եւ ի՞նչ խորհուրդ ունեն այդ մարմարեայ ձիւնաճերմակ քանդակները:

«Զեռքերի» մասին տեղեկութիւններ փնտռելիս, անկեղծ ասած, չէինք կարծում, որ հասնելու ենք հեռուոր 1950ական թրւակահաններ, առաւել եւս, որ կը հատենք անգամ Ատլանտեան ով-

*Կիանոն ու կը յայտնուենք հեռաւոր Կուբայի մայրաքաղաք Հաւանայում:*



Նկար 6. «Խոյնը եւ Կնկաց ծառ»  
աղբիւր-յուշարձանը Երեւանում




Նկար 7. «Բարեկամութեան ձեռքեր»-ը  
Երեւանի օդականն այգում

*Այս ճանապարհը մեզ յուշեց իտալական Ագորա (AGORA FEBBRAIO 2006) ամսագիրը, որի 2006 թուականի փետրուարեան համարից էլ քաղեցինք լրագրող Վիտտորիոյ Փրայեչի հեղինակած նիւթից մեզ հետաքրքրող հարցերի վերաբերեալ չափազանց հետաքրքիր մի պատմութիւն:*

*1950 Սեպտեմբերի 13ին երիտասարդ յեղափոխականների գինուած մի խումբ մահափորձ ձեռնարկեց Բատիստայի նկատ-*



մամբ, ով տարիներ առաջ զինուորական յեղաշրջմամբ իշխանութիւնը վերցրել էր իր ձեռքը եւ դաժանաբար իշխում էր Կուբայում: Յարձակումը տեղի էր ունեցել հէնց բռնապետի կնոջ աչքի առջեւ, ով այդ տեսարանից սարսափած դիմում է Աստծուն եւ աղերսում. «Եթէ Ծուլջեցիոն փրկուի, խոստանում եմ կանգնեցնել Յիսուսի արձանը, ինչպէս այն մէկը, որ վեր է խոյանում Բրազիլիայում՝ Ռիոյ դէ Ժանեյրոյում»: Թերեւս բարձրեալը լսում է կնոջ աղօթքն ու ասես հրաշքով բռնապետի նկատմամբ ձեռնարկած մահափորձը ճախողում է, իսկ իրագործողները սպանւում են: Եւ ահա Մարթա Բատիստան պէտք է կատարի իր խոստումը՝ ամուսնու փրկութեան համար պատրաստի Քրիստոսի հսկայաչափ քանդակը:



Նկար 8. Զիլմա Մարտիա


Ապագայ արձանը պատուիրում են քանդակագործուհի Զիլմա Մարտիային՝ (նկար 8) այն արուեստագէտին, ով տարիներ առաջ կերտել էր կուբացի նահատակ Խոսէ Մարտիի կիսանդրին: Սակայն յաւակնոտ Բատիստաներն ուզում էին, որ փրկչի արձանը լինի սպիտակ մարմարից, իսկ բարձրութեամբ գերազանցի Հաւանայի ամենաբարձր շէնքերը (նկար 9):

Այս ծրագրի իրականացմանը ներգրաւուում է Իտալիայում Կուբայի դեսպանատունը: 1957 թուականին ովկիանոսից հազարաւոր կիլոմետրեր հեռու, կարաբեան քանդակագործ Ալդոյ Բուսինին, որ յայտնի է «Ատլետներ» եւ «Իտալական Փորում» արձաններով, հանդիպում է Հռոմում Կուբայի դեսպանի հետ: Վերջինս նրան խնդրում է աջակցել Մարտիային՝ հսկայական ծաւալաչափերով այդ գործն իրականացնելու համար:



Նկար 9. Քրիստոսի արձանը Հաւանայում

1958 թուականի օգոստոսի վերջին բեռոնէ եւ պողպատեայ հիմնակմախքով հսկայական արձանը Յիսուս Փրկչի նմանութեամբ եւ տեսքով արդէն քանդակուած է մարմարից: Երեք հիմնական կտորները բեռնաւորում են երկաթուղային վագոններում եւ ուղղութիւն վերցնում նախ Ջենովայի Սուրբ Մարտինոյ նաւահանգիստ: Ձեռքերը, ոտքերը եւ հիմնաքարը հերթով ուղարկում են: Մարմարեայ հսկայ ստեղծագործութիւնը, որն այժմ կշռում է 320 տոննա, բեռնում է Հաւանա մեկնող մի նաւի վրայ (Յկար 10, 11, 12):



Նկար 10, 11



Նկար 12



1958 թուականի ծննդեան ասոներին տեղի է ունենում Յիսուսի արձանի բացումը:

Հայեցողական եւ համբերատար Փրկիչը 1958 թուականից սկսած բլրի վրայից ամէն օր հսկում է Կուբան: Լսում եւ օրհնում է կուբացիների ուրախութիւնները եւ ցաւերը:



Նկար 13. Ջիվնա Մադերա եւ Օտտաիոյ դիլ'Ամիկո Բրիստոսի գլխաւանդակի մօտ

1962 թուականի Յունիսին Կարարայի Ջունիո հրապարակում կատարում է հասարակական նոր պայտաի բացումը: Եւ քանի որ հարուստ պատմութիւն ու մշակոյթ ունեցող իտալական այս քաղաքն արդէն բաւականին ժամանակ բարեկամական յարաբերութիւնների մէջ է Հայաստանի մայրաքաղաք Երեւանի հետ, ուստի նրա կեանքում խոշոր այդ իրադարձութեանը մասնակցում է նաեւ հայկական պաշտօնական պատուիրակութիւնը՝ քաղաքապետ Գրիգոր Հասրաթեանի գլխաւորութեամբ: Այդ ժամանակ Կարարայի քաղաքապետը Ֆիլիպպոյ Մարտինելլին էր: Յունիսի 12ին քաղաքային խորհուրդը պաշտօնապէս հաստատում է Երեւանը որպէս քոյր քաղաք եւ կազմում է երկարաժամկէտ բարեկամութեան արձանագրութիւնը: Մէկ տարի անց՝ 1963 Օգոստոսի 8ին, Կարարայի քաղաքապետը գրում է Երեւանի իր գործընկերոջը. «Ուրախ եմ տեղեկացնելու, որ երկաթգծով Ձեզ եմ ուղարկում սպիտակ մարմարից բանդակուած մեծ ձեռքեր

պարունակող երկու արկղ: Կարարա ֆաղաֆի կողմից արուող այդ նուէրը կը դառնայ բարեկամութեան խորհրդանիշ եւ, որպէս քոյր ֆաղաֆների ֆաղաֆապետարաններ, աւելի կներձեցնի մեզ: Յուսով եմ, որ այն անվնաս տեղ կը հասնի ու վստահ եմ, որ Երեւանի բնակիչները կը հաւանեն կարարացիների նուէրը: Խնդրում եմ ընդունել իմ եւ Կարարա ֆաղաֆի սրտանց շնորհաւորանքները»:

*Մարմարեայ երկու ձեռքերը, որոնք աւելի քան երկու մետր են, ոչ այլ ինչ են քան Հաւանայի Քրիստոսի կրկնօրինակը, որ քանդակագործ Ջիլմա Մաղերան կերտեց 1957-1958 թուականներին: Քաղաքապետ Մարտինելլին նրան դա խնդրեց Օտտաւիո դելլ'Ամիկոյի պատուին (նկար 13), Կարարայի սեփականատէրը, որի ջանքերի շնորհիւ ապագայ արձանի համար Կարարայում գտնուեցին եւ մշակուեցին մարմարի հսկայ բեկորները), եւ նա շմերժեց: Գրեթէ կէս դար անց էլ նրանք պահպանել են իրենց գեղեցիկ տեսքը Երեւանի կենտրոնում գտնուող ու մշտապէս մարդաշատ այս գրօսայգում: Կարծես աղօթքի համար միացած ձեռքեր, որ երեւանցիներն անուանում են «Բարեկամութեան ձեռքեր»:*

*«Բարեկամութեան ձեռքերը» (նկար 7) հասան Երեւան, քանդակագործ Արա Յարութիւնեանի միջամտութեամբ նոր յորինուածք ստացան եւ տեղադրուեցին Երեւանի օդակաձեւ գրօսայգում: Այդ նրբագոյն կոթողների հանդիսաւոր բացումը մեծ շուքով տեղի ունեցաւ 1965 թուականին:*

*Երեւանցիներից շատերը անշուշտ տեսել են Տէրեան փողոցին աջից յարող օդակաձեւ գրօսայգում տեղադրուած երկու խոյրով պահպանուող «Կենաց ծառ» աղբիւր-յուշարձանը (նկար 6), շատերն էլ գուցէ խմել են նրա սառնորակ ջրից: Ահա այս աղբիւր-յուշարձանն էլ պատճէնն է այն բնօրինակի, որ Երեւանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթեանն իր ու երեւանցիների կողմից 1965 թուականին նուիրեց Իտալիայի Կարարա քաղաքին՝ ի նշան բարեկամութեան, մաղթանքով, որ այդ բարեկամութիւնը «ջրի նման երկար, յաւերժ ու զուլայ» լինի:*

*Աղբիւր-յուշարձանի հեղինակներն են ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեանը (Երեւանցիների սիրելի Ռաֆօն) եւ Մայր Հայաստանի ու Երեւանը գեղեցկացնող տասնեակ այլ քանդակների հեղինակ, փողովրդական նկարիչ Արա Յարութիւնեանը:*

*Երեւան եւ Կարարա քաղաքների բարեկամութեան յուշաղբիւրի նախագծի բազմաթիւ տարբերակներ է մշակել Ռաֆայէլ*



Իսրայէլեանը, նրա սիրած գարդամոտիւնները՝ խաղող, նուռ եւ այլ թեմաներով մշակումները, շատ են եւ բազմազան:

Նշենք նաեւ, որ Ռաֆայէլ Իսրայէլեանի եւ Արա Յարութիւնեանի համատեղ աշխատանքի արդիւնք են «Մայր Հայաստան», «Առիժ» (Գեղարդի ճանապարհին), «Արծիւ» (Զուարթնոցի ճանապարհին), «Շինարար Արծիւ» եւ «Վահագն Վիշապաբաղ» Երեւանի հարաւային եւ հիւսիսային մուտքեր-յուշակոթողները, Սարգարապատի յուշահամալիրը եւ բազմաթիւ այլ ստեղծագործութիւններ:

Տեղին է յիշատակել նաեւ ճարտարապետ Արմէն Զարեանին եւ նրա քոյր՝ իտալարենակ քանդակագործուհի Նուարդ Զարեանին, որոնք մեծ ջանք թափեցին եւ տիպաբանական եւ գեղարուեստական առանձնախատկութիւններով հարազատ մնալով իտալական եւ հայկական մշակութային աւանդոյթներին, լրացնում են երկու երկրների մշակութային ժառանգութեան գանձարանը:

Յօդուածում օգտագործուած բոլոր լուսանկարները վերցուած են Ալ. Թամանեանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարանինստիառութի արխիւից:

ԱՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

## Summary

TYPOLOGICAL AND ARTISTIC FEATURES OF THE  
MEMORIAL MONUMENTS OF ARMENIAN-ITALIAN  
CULTURAL COOPERATION

ANI GRIGORYAN

The study of typological features of the Armenian-Italian monuments (including the small architectural forms) is conditioned by the monuments located in both countries and having certain significance for the two peoples' history. Along with marking the important events and memories, they are the evidence of centuries-long Armenian-Italian friendship.

The typology of the memorial monuments placed in two countries is quite multiform: for example the ones in Venice including the memorial plaque attached to the wall of the cathedral of the Torcello, the Armenian baldachin inside the San Marco Basilica, four horses on the fronton of San Marco Basilica (the principal is in the museum of San Marco basilica), the sepulcher and gravestone of Catherine Cornaro in the Church of San Salvador, the memorial plaque attached to the wall of the parish house of San Martino, for the residential house of Mekhitarian fathers in Venice, etc.

Besides Venice, there are many other monuments found throughout Italy mainly in the form of memorial stones, plaques, khachkars, wall inscriptions, gravestones, fountain-memorials, statues, chapels, and other compositions. Among them are: a church and khachkar in Milan, the San Gregory Armeno Street and a church (with relics of Gregory the Illuminator) in Naples, the grave of the Armenian soldier near the Cathedral of Ravenna, the memorial stone of the church in Torcello (about the Armenian builder), the Armenian Alley and District in Venice, churches dedicated to the Patron of the city of Nardò St. Gregory the Illuminator (by the way, since 2013 the Italian city of Nardò and Armenian Gyumri have become sister cities), the memorial khachkar dedicated to the Armenian-Italian friendship in Bari (architect A. Grigoryan), etc.

There are a number of Italian memorial monuments in Armenia as well. Among them are: the fountain-memorial of friendship of two countries placed in the circular park of Yerevan (architect R. Israelyan) and the principal of the same memorial in Carrara of Italy, The Hands of Friendship in the circular park



of Yerevan (arch. Jilma Madera, redesigned by Ara Harutyunyan in Yerevan), Leonardo da Vinci's bust portrait in the yard of the Yerevan National University of Architecture and Construction, Italian Street in Yerevan, Piazza Grande Business Complex in Yerevan, etc.

It should be mentioned that the memorial structures in both countries are distinguished by their architectural and artistic peculiarities proving the high professional quality of their creators

However, the above-mentioned examples confirm the necessity of special investigation of traces of the Armenian-Italian friendship considering the memorial monuments existing in both countries.